ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1, հեռ.՝ (+374 10) 514 101, 514 200, Ֆաքս՝ (+374 10) 545 944, Էլ.փոստ՝ mayor@yerevan.am

№ 01/20-24517Հ «03» 06 2014 թ.

ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության աշխատակազմ
ՄՏԻՑ
ВХ. Ո-07/3211-14
«05» 06 2014 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ
ԱՌԸՆԹԵՐ ՊԵՏԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ
ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ ՊԱՐՈՆ Ա.ՍԱՀԱԿՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Սահակյան

Ի պատասխան Ձեր 22.04.2014թ. հ.01/18/2281-14 գրության՝ կապված գրությանը կից հավելվածում ընդգրկված գույքային միավորների հանձնման-ընդունման աշխատանքները իրականացնելու խնդրի հետ, հայտնում եմ հետևյալը.

Սույն թվականի մայիսի 5-ի հ.444-Ա կարգադրությամբ ստեղծվել է աշխատանքային խումբ, որն ուսումնասիրել է ներկայացված գույքերի կարգավիճակի հարցը:

Աշխատանքային խմբի կողմից թվով 12 գույքային միավորների մասով տեղում կատարված ուսումնասիրությունների արդյունքում պարզվել է, որ թվով 3 գույքային միավորներ՝ Էրեբունի փողոցի հ.32 շենքի հ.91 հասցեում գտնվող գրադարանի /Ա.Իսահակյանի անվան գրադարան/, Սունդուկյան փողոցի հ.26 հասցեում գտնվող գրադարանի /Թիվ 5 գրադարան/ և Վարշավյան փողոցի հ.2 հասցեում գտնվող գրադարանի /Թիվ 6 գրադարան/ զբաղեցրած տարածքները ընդգրկված են Երևան համայնքի սեփականություն հանդիսացող գույքի կազմում և Երևանի քաղաքապետարանի հաշվեկշռում և դրանց նկատմամբ համաձայն Հանրապետության կառավարության 2009 թվականի մայիսի 29-ի հ.604-Ն որոշման գրանցված է Երևան համայնքի սեփականության իրավունքը: Թվով 1 գույքային միավոր՝ Քանաքեռ ՀԷԿ հ.4/1 հասցեում գտնվող գրադարանի /Թիվ 6 գրադարան/ զբաղեցրած տարածքը ընդգրկված է Երևանի քաղաքապետարանի հաշվեկշռում և համայնքի սեփականություն հանդիսացող գույքի կազմում, ինչի պարագայում ներկայումս հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի մայիսի 29-ի հ.604-Ն որոշումը, համաձայն որի <<Երևանի քաղաքապետարանի աշխատակազմ>> պետական կառավարչական հիմնարկի հաշվեկշռում հաշվառված /հիմնարկին ամրացված/ գույքը սեփականության իրավունքով անհատույց փոխանցվում է Երևան համայնքին,

իրականացվում են աշխատանքներ՝ Երևան համայնքի սեփականության իրավունքը գրանցելու ուղղությամբ: Թվով 8 գույքային միավորներ՝ Էրեբունի փողոցի հ.30, Փափազյան փողոցի հ.23, Գյուլբեկյան փողոցի հ.24, Սարկավագի փողոցի հ.149, Մոլդովական փողոցի հ.4, Շինարարների փողոցի հ.10/1, Ա-3 թաղ., հ.37 շենքի հ.46 և Բաբաջանյան փողոցի հ.1/1 հասցեներում գտնվող տարածքները ընդգրկված չեն Երևանի սեփականություն հանդիսացող գույքային միավորների հաշվեկշռային բազայում և հետևաբար Երևան համայնքի սեփականություն չեն հանդիսանում, ինչի պարագայում Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության հետ այդ գույքային միավորների մասով հանձնման-ընդունման աշխատանքներ իրականացնելու անհրաժեշտություն չկա:

Հարգանքով՝

Տ.ՄԱՐԳԱՐՅԱՆ

Կատ. Ա.Ամյան
Հեռ. 514-269